

ըմբոստ Եռուսեֆ Իսկն Ապիլի-Սաթ պէտք էր որ Պաղտատ գայ, Խալի-Փայ Մուլթատիրին ոտքը՝ « եւ կոխէ Սուլթանական զորդին վըրայ»<sup>(15)</sup> : Այսինքն բոլորովին Խալիֆային ազդեցութեան ենթարկուի : Իսկ վկայութեան մըն ալ կը հանդիպինք Ստեփանոս Օրբէլեանի մօտ, որ կը վկայէ թէ 1103ին «գնաց Սենեքերիմ թաղաւորն ի տեսութիւն Մէլիքչահ սուլտանին ի մայրաքաղաքն Պարսից յԱսպահան . եւ հանդիպեալ նմա՝ մեծարեալ լինէր բարձրագոյն փառօք եւ նստուցեալ ի գլուխ բազմականին»<sup>(16)</sup> :

Հոս յառաջ բերել կ'ուզեմ Արար պատմիչ էլ-Վաղըտի մէկ վըրայութիւնը, որ խօսելով Բիւզանդացոց սպարապետ Մահանի վրայ (այլուստ ծանօթ իբր Մանուէլ) որ ծագմամբ Հայ էր, Արարացոց պատուիրակութիւնը ընդունած ատեն, 636ին, անոնց ի պատիւ գորգեր կը սիրուին, սակայն խորիստ Արարները կը մերժեն անոնց վրայ նստիլ, եւ գորգերը վերցնելով գետնին վրայ կը նստին՝ ըսելով . «Այն է լաւագոյն կենցաղավարութիւնը որ Աստուծմէ իսկ է, եւ ինչ որ Աստուծա՛մ մեզի նստելու համար պատրաստած է, աւելի մաքուր է քան քու գորգերդ» : Արարները ասոր կը կցեն նաեւ վկայութիւն Ղուրանէն : Մեզի համար հետաքրքրականը հոս սա է որ ըստ էլ-Վաղըտի Արարները կը ներկայանան իբր գորգ չգործածողներ, մինչ քիչ վերը տեսանք որ կարծեցեալ Շապուհ Բագրատունի իր պատմութեան Արար Ալի Իսկն Թալիպ Խալիֆային օրով, այսինքն 644-656, այլ Խալիֆան իր հիւրերը պատուելու համար գորգեր սիրել կու տայ : Արդ, եթէ մենք երկու վկայութիւններն ալ ընդունինք՝ այն ատեն պէտք է կարծել որ Արարները զրեթէ տասը տարուան մէջ սորվեցան դոնէ իրենց արքունեաց մէջ գորգ գործածել : Գուցէ Շապուհի վերադրեալ պատմութեան այս վկայութիւնը բառացի առնելու չէ : Ամէն պարագայի՝ գորգի այս գործածութիւնը որոշ է որ եկամուտ եղած է Արարացոց մօտ, եւ ըստ երեւոյթի՝ Հայկական սոյնութիւն մըն է որ որդեգրած են :

Մենք տեսանք թէ ԺԵ դարուն սկիզբն իսկ Թիմուրի արքունեաց մէջ «ճառախօսութեան գորգ», «խնճոյքի գորգ», «արզիլման գորգ», «գինեոյ եւ երաժշտութեան գորգ», ըստ Թիմուրի կենսագիր Գամասկոսի Ահմէտ Արասչահի : Թիմուրի ուրիշ մէկ կենսագիրը, Եղտցի (Պարսկաստան) Շէրիֆ էտ-Տին Ալի իր Թիմուրլանկի պատմութեան մէջ բազմիցս կը վկայէ, որ Թիմուր իրեն հպատակ այս կամ այն իշխանին կը թոյլատրէր իր գահոյից գորգը համբուրել, ասիկա սեպուելով մեծ պատիւ մը հպատակ իշխանաւորին, «եւ ան (իշխանը) պատիւ ունեցաւ գորգը համբուրելու»<sup>(17)</sup> : Բազմիցս կը յիշուի «կայսե-

(15) The Eclipse of the Abbasid Caliphate. — 1921, Vol. IV, p. 52.

(16) Պատ. նահանգին Սիսական : Թիֆլիս, 1911. էջ 332 :

(17) The History of Timur-Bec. — London, 1723, Vol. II, էջ 231, նաեւ Ա. հատր, էջ 206, 211, 281 :